ՀՐԱՆՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

(ծննդյան 60 ամյակի առթիվ)

Լուսցավ հանրապետության ականավոր պատմաբաններից մեկի՝ պատմական գիտությունների դոկտոր, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Հրանտ Ալեքսանի Ավետիսյանի ծննդյան վաթսուն տարին:

Հ. Ավետիսյանի գիտական հետաքրքրությունների շրջանակի մեջ են մտնում մի քանի պրոբլեմներ, որոնց մշակման գործում նա զգալի ավանդ է ներդրել: Դա, ամենից առաջ, Հայաստանի և ամբողջությամբ վերցրած Անդրկովկասի երիտասարդության հեղափոխական շարժման պատմությունն է: Անդրկովկասում երիտասարդության հեղափոխական շարժման պատմությունը ցարական իշխանության, տեղական ազգայնական բուրժուազիայի դեմ, սովետական իշխանության հաղթանակի և ամրապնդման համար երկրամասի աշխատավորների մղած պայքարի բաղկացուցիչ մասն է: Այդ պատճառով այն բոլոր պատմաբանները, որոնք զբաղվել են երկրամասում հեղափոխական շարժման պատմության պրոբլեմի մշակմամբ, այս կամ այն չափով լուսաբանել են այդ շարժմանն Անդրկովկասի երիտասարդության մասնակցության հարցերը: Սակայն այդ հարցերի խորացված ուսումնասիրությունը դրանք առանձնացրել է հատուկ պրոբլեմի մեջ, որի հետազոտությունը սովետական պատմագիտության մեջ սկսվել է 1950-ական թվականների վերջերից: Դա չի նշանակում, որ մինչև այդ ոչինչ չի գրվել Անդրկովկասի հեղափոխական երիտասարդական շարժման առաջացման ու զարգացման, կոմերիտական կազմակերպությունների ձևավորման մասին: Դեռևս 1920-ական թվականներին երևան եկան այդ թեմային նվիրված առաջին աշխատությունները: Դրանց հեղինակները, լինելով հեղափոխական իրադարձությունների մասնակիցներ, դրանք նկարագրելու ժամանակ հիմնականում հենվում էին իրենց տպավորությունների և հիշողությունների վրա, ստեղծելով ասավելապես հուշագրային բնույթի աշխատություններ, որոնք ժամանակակից պատմաբանի համար ծառայում են որպես յուրատեսակ աղբյուր: Անդրկովկասի երիտասարդության հեղափոխական շարժման հիրավի գիտական պատմության ստեղծումը, որը հենվում էր արխիվային և փաստագրական այլ նյութերի վերլուծության վրա, դարձավ այն երիտասարդ պատմաբանների խնդիրը, որոնք գիտական ասպարեզ մտան 1950—1960-ական թվականների սահմանագծում: Հանրապետությունում առաջիններից մեկը այդ պրոբլեմատիկային անդրադարձավ Հ. Ավետիսյանը: Այդ տեսակետից ուշագրավ է նրա «Անդրկովկասի կոմերիտմիությունը սովետական իշխանության հաղթանակի և ամրապնդման համար մղված պայքարում: 1917—1921» (Երևան, 1961, ռուսերեն) մենագրությունը, որը գնահատելիս հարկավոր է ամենից առաջ նշել հեղինակի մեթոդաբանորեն նիշտ մոտեցումը, որն արտահայտվել է պրոբլեմն ամբողջ երկրամասի մասշտաբով քննության առնելու մեջ: Արդեն այդ աշխատության մեջ լիովին դրսևորվել են այն գծերը, որոնք հատուկ են Ավետիսյան-հետազոտողին՝ աղբյուրների լայն շրջանի օգտագործումը, շարադրանքի հագեցվածությունը փաստական նյութով, գիտական շրջանառության մեջ նոր տվյալներ ու փաստեր հերմուծելը, նախորդների կողմից ստեղծված գրականության մեջ անհրաժեշտ ճշգրտումներ և ուղղումներ մտցնելու ձգտումը: Անդրկովկասի երիտասարդության հեղափո-

խական շարժումը հենության առնելով համառուսաստանյան հեղափոխական պրոցեսի հետ սերտ կապի մեջ. Հ. Ավետիսյանն առանձնացրել է այդ շարժման հիմնական փուլերը, ցույց է տվել Անդրկովկասի հեղափոխական երիտասարդական կազմակերպությունների գործունեության առանձնահատկությունները բուրժուազգայնական կուսակցությունների տիրապետության ժամանակաշրջանում, Անդրկովկասի երիտասարդության կոմունիստական միության՝ որպես ՌԿԵՄ երկրամասային կազմակերպության, կազմավորման պրոցեսը, մանրամասն լուսաբանել է երիտասարդության մասնակցությունը սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարին և ցույց է տվել, որ երկրամասում սովետական իշխանության ամրապնդման ժամանակաշրջանում ավարտվել է Անդրկովկասի հանրապետությունների կոմերիտմիության կազմակերպական ձևավորումը: Առանձնապես նշենք, որ հեղինակն առաջին անգամ ճշմարտություն է ասել Անդրկովկասի երիտասարդական շարժման շատ գործիչների, կոմերիտմիության ղեկավարների՝ Սուրեն Աղամիրովի, Լևոն Միրզայանի, Ալեքսանդր և Նյուսյա Բրեյմանների, Բորիս Բարխաշովի, Ստեփան Վարդանյանի, Միխայիլ Բաբայանցի, Ռաֆֆի Խիտարովի և շատ ուրիշների մասին, ցույց է տվել նրանց ուղին դեպի հեղափոխություն, բացահայտել է այդ երիտասարդ հեղափոխականների անձնազոհությունը և անսահման նվիրվածությունը կուսակցության գործին: Նրանցից մեկի՝ Ռաֆֆի Խիտարովի, կյանքին և գործունեությանը Հ. Ավետիսյանն անդրադարձել է 1966 թ. հայերեն և 1971 թ. ռուսերեն (ընդլայնված ու լրացրած տարբերակով) հրատարակելով «Ռաֆֆի Խիտարով» գիրքը: Դա մի գրավիչ պատմվածք է միջազգային երիտասարդական կոմունիստական շարժման ականավոր գործչի կարճատև, բայց մեծ սխրագործություններով մինչև վերջ հագեցված կյանքի մասին, գործիչ, որի հեղափոխական մկրտությունը տեղի է ունեցել Անդրկովկասում: Ընթերցողի աչքի առաջ հառնում է հեղափոխական երիտասարդության տաղանդավոր, խորագիտակ առաջնորդի կերպարը, որը վիթխարի ավանդ է ներդրել Գերմանիայում, Ֆրանսիայում, Չինաստանում և այլ երկրներում երիտասարդության հեղափոխական շարժման ծավալման գործում: Ռաֆֆի Խիտարովը անեց, դառնալով միջազգային երիտասարդական շարժման խոշոր գործիչ, մի շարք տարիների ընթացքում հանդիսանալով երիտասարդության Կոմինտերնի գործկոմի գլխավոր քարտուղարը և նրանում ՀամԼԿԵՄ պատվիրակության ղեկավարը: Կյանքի վերջին տարիներին (մինչև վաղաժամ ողբերգական մահը 1937 թ.) կուսակցական պատասխանատու աշխատանք կատարելով Ուրալում, Ռ. Խիտարովը մեծ ավանդ ներդրեց սովետական ինդուստրիայի արևելյան բազայի ստեղծման գործում: Հ. Ավետիսյանի գիրքը ժողովրդին և պատմությանը վերադարձրեց հայ ժողովրդի նշանավոր զավակ Ռաֆֆի Խիտարովի անբասիր անունը և պանծալի գործերը:

Հ. Ավետիսյանի «Անդրկովկասի կոմերիտմիությունը պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշի ներքո» (Երևան, 1968, ռուսերեն) մենագրությունը որոշ չափով հանդիսանում է Անդրկովկասի երիտասարդության հեղափոխական շարժման մասին վերը հիշատակված գրքի շարունակությունը, ընդգրկելով 1920-ական թվականների սկզբի և կեսի ժամանակահատվածը: Այդ մենագրության մեջ կոմերիտական կազմակերպությունների գործունեության լույսի տակ հենության են առնվում այնպիսի հիմնական հարցեր, ինչպես Անդրկովկասյան ֆեդերացիայի կազմավորումը, ժողովրդական տնտեսության վերականգնումը, սոցիալիստական շինարարության սկիզբը:

Կարելի է ենթադրել, որ Ռաֆֆի Խիտարովի կյանքի և գործունեության հետազոտումը Հ. Ավետիսյանին դրել է անդրադառնալ միջազգային երիտասարդական շարժման պատմությանը՝ երկրորդ պրոբլեմին, որը մտնում է մեր հոբելյարի դիտական հետաքրքրությունների շրջանակի մեջ: Այդ մեծ ու բարդ պրոբլեմին, բացի մի շարք հոդվածներից, նվիրված են հեղինակի երկու մենագրությունները՝ «Վ. Ի. Լենինը և պրոլետարական ինտերնացիոնալիզմը հեղափոխական երիտասարդական շարժման մեջ (1894—1920 թթ.)» (Երևան, 1979, ռուսերեն) և «Պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշի ներքո» (Երևան, 1982, ռուսերեն): Մի շարք երկրների երիտասարդական շարժման պատմության, երիտասարդության կոմունիստական ինտերնացիոնալ գործունեության օրինակով հեղինակը ցույց է տալիս ինտերնացիոնալիզմի լենինյան գաղափարների՝ սոցիալական արդարության համար մղված պայքարում բոլոր երկրների հեղափոխական երիտասարդության գլխավոր զենքի հաղթանակը: Փաստական մեծ նյութի հիման վրա ցույց է տրված Վ. Ի. Լենինի գործունեությունը երիտասարդության դաստիարակության ուղղությամբ, նրա գաղափարների ու մոտքերի անանցողիկ կարևորությունը երիտասարդության հեղափոխական շարժմանը հաղորդակից դարձնելու համար: Այդ բնագավառում կուտակված պատմական փորձը վիթխարի նշանակություն ունի ժամանակակից երիտասարդական շարժման համար, որն աչքի է ընկնում իդեալների ու խնդիրների ծայրահեղ խայտաբղետությամբ: Այդ փորձը համոզիչ կեր-

պով վկայում է, որ երիտասարդ սերնդի հեղափոխական խիզախումների հաջողության գործում գրավականը միայն անշեղ կողմնակցությունն է պրոլետարական ինտերնացիոնալիզմին:

Հ. Ավետիսյանի գիտական հետաքրքրությունների շրջանակի մեջ է մտնում նաև Հայաստանում հեղափոխական շարժման պատմության պրոբլեմը: Այդ տեսակետից ուշագրավ է նրա «Մայիսյան ապստամբությունը Կոմինտերնի նյութերում» (Երևան, 1981) գիրքը: Հայաստանի աշխատավորների հերոսական Մայիսյան ապստամբությունը 1920 թ. հայ ժողովրդի հեղափոխական շարժման պատմության առավել հանգամանորեն լուսաբանված էջերից է: Հ. Ավետիսյանի ծառայությունն այն է, որ նա լուսաբանել է այդ իրադարձության նոր տեսանկյուն՝ Մայիսյան ապստամբության արձագանքը համաշխարհային կոմունիստական շարժման մեջ, որը վկայում է, որ սովետական իշխանության հաղթանակի համար Հայաստանի բանվորների ու գյուղացիների սղած հերոսական պայքարը գտել է շատ երկրների առաջադիմական ուժերի լիակատար ըմբռնումն ու աջակցությունը:

Հ. Ավետիսյանը նկատելի ավանդ է ներդրել Հայաստանի լենինյան կոմերիտմիության պատմության մշակման գործում: Այն բանից հետո, երբ 1950-ական թվականների վերջին- 1960-ական թվականների սկզբին մենագրային հետազոտության ենթարկվեցին Հայաստանի կոմերիտմիության պատմության հիմնական փուլերը [նշենք, որ Հ. Ավետիսյանի առաջին մենագրությունը՝ «Հայաստանի կոմերիտմիությունը սոցիալիստական ինդուստրացման համար մղված պայքարում» (Երևան, 1959) նվիրված էր այդ փուլերից մեկին], անհրաժեշտ նախադրյալներ առաջացան Հայաստանի կոմերիտմիության պատմության ընդհանրացված աշխատություն ստեղծելու համար: Հեղինակների կոլեկտիվը, որի կազմի մեջ մտնում էր նաև Հ. Ավետիսյանը, 1968 թ. հրատարակեց «Հայաստանի կոմերիտմիության պատմություն» գիրքը: Ավելի ուշ, 1971 թ. (ռուսերեն) և 1981 թ. (հայերեն) հրատարակվեցին այդ աշխատության լրացված ու ընդլայնված տարբերակները:

Վերջին տարիներին Հ. Ավետիսյանը բեղմնավոր կերպով զբաղվում է Մեծ հոկտեմբերի հայրենիքի՝ Ռուսաստանի և Հունգարիայի հեղափոխական համագործակցության հարցերով: Ինչպես հայտնի է, Հունգարիայի աշխատավորները 1919 թ. իրենց երկրում սովետական իշխանություն հաստատելու փորձ կատարեցին: Հ. Ավետիսյանը Բուդապեշտում հունգարերեն հրատարակել է մի քանի հոդված, որոնք առավելապես նվիրված են հունգարական ակնառու կոմունիստ Բելա Կունի հեղափոխական գործունեությանը Ռուսաստանում, նրա մասնակցությանը Արևելքի ժողովուրդների I համագումարի աշխատանքին:

Հոբելյարը երկար տարիներ է նվիրել ոչ միայն բեղմնավոր գիտական աշխատանքին, այլև հասարակական ակտիվ գործունեությանը: 1949 թ. Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետն ավարտելուց հետո Հ. Ավետիսյանը կուսակցական և կոմերիտական պատասխանատու աշխատանք է կատարել: Այնուհետև 25 տարիների ընթացքում նա աշխատել է Հայկական ՍՍՀ ԳԱ նախագահությունում, հանդիսանալով նախագահության գիտական քարտուղարը, ԳԱ գլխավոր գիտական քարտուղարի տեղակալը, գիտական կադրերի պատրաստման խորհրդի նախագահը: Գիտակազմակերպական աշխատանքի կուտակած փորձն օգտակար եղավ Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի դիրեկտորի պաշտոնում, որը Հ. Ավետիսյանը զբաղեցնում է 1979 թվականից: Երկար տարիներ նա եղել է Հայկական ՍՍՀ ԳԱ նախագահության կուսակցական բյուրոյի քարտուղար, բազմիցս ընտրվել է 26 կոմիսարների անվան շրջանի կուսշրջկոմի բյուրոյի անդամ, ժողովրդական դեպուտատների Երևանի քաղաքային սովետի դեպուտատ:

Պատմական գիտության զարգացմանը մատուցած ծառայությունների համար Հ. Ավետիսյանը արժանացել է «Պատվո նշան» շքանշանի, լենինյան կոմերիտմիության (1978 թ.) և Հայաստանի լենինյան կոմերիտմիության (1971 թ.) մրցանակների: Ղեկավարելով պատմության ինստիտուտի կոլեկտիվը, Հ. Ավետիսյանը մեծ հոգատարություն է ցուցաբերում պատմական կադրերի պատրաստման նկատմամբ, համախմբում է հետազոտողների ուժերը և նրանց նպատակամղում է լուծելու պատմական գիտության ասելիք կանգնած կարևոր խնդիրները:

Հրանտ Ավետիսյանը իր հոբելյանը դիմավորեց ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում, լի նոր մտահղացումներով: Ցանկանանք նրան քաջառողջություն և այդ մտահղացումների իրականացում:

ԳԵՎՈՐԳ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ
Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս
ԿՈՍՏԱՆԴԻՆ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ
պատմական գիտությունների դոկտոր